ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» հոկտեմբերի 2019 թվականի N: 544-ա ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱԹՈԼՈԳՈԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N:992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 67-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինողի 2019 թվականի հոկտեմբերի 25-ի N ԱՍ/05/17630-19 գրությունը և մրցույթի մասնակից Աշոտ Շահբազյանի 2019 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Ստեղծել «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2019 թվականի հոկտեմբերի 22-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ մրցույթի մասնակից Աշոտ Շահբազյանի բողոքը քննարկող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2019 թվականի հոկտեմբերի 25-ի N 544-Ա որոշման

«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱԹՈԼՈԳՈԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՇՈՏ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հովհաննես Մաթոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական,

Արմեն Սաֆարյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության բժիշկ-փորձագետ,

Դավիթ Հովսեփյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար,

Մուշեղ Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է